Կարծիք
Պաշտոնական ընդդիմախոսի
Անրիետա Արաիկի Կարապետյանի ‹‹Հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում ›› թեմայով, ներկայացված ԻԲ 00.01. - ‹‹Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ›› մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

1. **Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և վերջինիս արդյունքում ձևավորվող տեխնածին և թվայնացված սոցիալականությունը ընդգծեցին նոր հաղորդակցական հնարավորությունների և առանձնահատկությունների ուսումասիրության կարևորությունը, պահանջեցին ժամանակակից հասարակության չափազանց պատասխանատու և լուրջ հետազոտություն: Հաղորդակցությունը, լինելով մարդու գոյաբանական հիմքերից մեկը ու հասարակական հարաբերությունների անբաժան մասը, մշտապես թելադրում է որոշակի ձևաչափ, որի փոխակերպումները դառնում են հասարակության սոցիոմշակութային, քաղաքական, մարդաբանական առանձնահատկությունների պայման: Այս տեսանկյունից, թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալական իրականության վիրտուալացման արդյունքում ձևավորված հաղորդակցական նոր ձևերով և հնարավորություններով, այլև ընդհանրապես այն սոցիոմշակութային փոխակերպումներով, որոնց իմաստավորումը կարևոր է ժամանակակից քաղաքակրթական գործընթացների համարժեք գնահատման տեսանկյունից, քանի որ հնարավորություն է ստեղծվում հասկանալու մարդու և հասարակության գոյության առանձնահատկությունները տեխնածին տեղեկատվական միջավայրում:

2. **Հետազոտության նպատակը և խնդիրը:**

Ատենախոսության հիմնական նպատակն է պարզել հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում: Հիշյալ նպատակից բխող խնդիրների թվում առանձնացվել են վիրտուալ սոցիալական ցանցերում հայ օգտատերերի նախապատվությունների, վիրտուալ սոցիալական ցանցելում հայ օգտատերերի վարքային մոդելների, կիբեռտարածությունում նրանց հաղորդակցական հնարավորությունների և սահմանափակումների հարցը, այս կամ այն վիրտուալ սոցիալական ցանցի մասնակիցների տարիքային և սեռային առանձնահատկությունները, հայ

օգտատերերի համար նախընտրելի հաղորդակցական եղանակների, ինչպես նաև առավել հասանելի և դյուրին սոցիալական ցանցերի բացահայտումը:

3. **Հետազոտության ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը:**

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքում պարզաբանվել է հայ օգտատերերի շրջանակում հաղորդակցության առցանց և անցանց ձևաչափերի նախընտրելիության հարցը, ուսումնասիրվել են առցանց ձևաչափի շրջանակներում դրսևորվող նպատակների, հարաբերությունների և ծառայությունների առանձնահատկությունները, ինքնաներկայացման դրսևորումները, սոցիալ-հոգեբանական նախապատվությունները, ինչը օգտագործվել է վիրտուալ սոցիալական ցանցերում հայ օգտատերերի տիպաբանումը ներկայացնելու համար: Վիրտուալ սոցիալական ցանցերում հայ օգտատերերի մշակույթի ուսումնասիրության արդյունքում առաջ է քաշվել նաև օգտատերերի նոր՝ այսպես կոչված ‹‹թափառող›› տիպը, որը բնութագրվել է ամեն պատեհ-անպատեհ պահ սոցիալական ցանց մուտք գործելու մղումով:

4. **Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը**

Տվյալ հետազոտության արդյունքների կիրառելիության շրջանակը կարող է չափազանց լայն լինել: Մի կողմից դրանք լրացնում են պատկերացումները հայ հասարակության ընդհանուր սոցիոմշակութային առանձնահատկությունների մասին, մյուս կողմից կարող են հանդիսանալ ընդհանրապես վիրտուալության սոցիոլոգիական իմաստավորման լրացուցիչ հնարավորություն. քանի որ վիրտուալ սոցիալական ցանցերի ուսումասիրությունը հանդիսանում է նաև մի շարք այլ գիտակարգերի կենտրոնական խնդիրներից մեկը (օրինակ, փիլիսոփայության, հոգեբանության, կիբեռնետիկայի, նշանագիտության և այլն), այս հարցի սոցիոլոգիական վերլուծությունը դառնում է կարևոր միջգիտակարգային բաղադրիչ և հնարավորություն է տալիս ամբողջացնելու իրականության, ժամանակակից հասարակության և մարդու ընդհանուր պատկերը: Այս փաստը հաստատում է, որ աշխատանքը հետաքրքրիր և օգտակար կլինի ոչ միայն սոցիոլոգների, այլև տարբեր ոլորտների մասնագետների համար:

Նշենք, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել թե՛ կրթական գործընթացներում՝ որպես օժանդակ նյութ դասախոսությունների, սեմինարների և բանախոսությունների համար, թե՛ պետական ծառայության մարմինների կողմից՝ սոցիալական տարատեսակ գործընթացների ընկալման համարժեքությունը ապահովելու նպատակով:

Բացի այդ, հետազոտության արդյունքները կարող են իրենց կիրառական նշանակությունը ձեռք բերել նաև մեդիա ոլորտի, համացանցային մարքեթինգի և, ընդհանրապես, վիրտուալ ցանցերում հասարակական կարծիք ուսումնասիրող կամ ձևավորող բոլոր մասնագետների համար:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վեց ենթագլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 157 էջի վրա: Ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը, առանձնացրել է ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, ինչպես նաև առաջ է քաշել երկու վարկած և ներկայացրել հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հիմնավորել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ սահմանման, հիմնական բնութագրիչների, ինչպես նաև տեսամեթոդաբանական հիմքերի վերլուծության շնորհիվ ներկայացված են հաղորդակցման էությունն ու տարատեսակները, ինչպես նաև հաղորդակցական գործընթացի մոդելներն ու դրանց զարգացումը:

Ատենախոսության երկրորդ գլխում անդրադարձ է կատարվել առցանց տիրույթի հաղորդակցմանը, որի ընթացքում համեմատական վերլուծություն է արվել առցանց և անցանց հաղորդակցությունների միջև և մանրակրկիտ ներկայացվել է վիրտուալ սոցիալական ցանցի էությունը որպես առցանց տիրույթի տարատեսակ: Արդյունքում վիրտուալ սոցիալական ցանցը քննարկվել է որպես հաղորդակցության սկզբունքորեն նոր տարածություն և արժեհամակարգի ձևավորման յուրահատուկ դաշտ՝ իր թե՛ նոր հնարավորություններով, թե՛ նոր սահմանափակումներով:

Երրորդ գլխում բուն սոցիոլոգիական հետազոտությունն է, որի շրջանակներում ներկայացված են սոցիոլոգիական հետազոտության ծրագրի մեթոդաբանական մասը, հիմնախնդրի նկարագրությունը, կառուցված օպերացիոնալ սխեման և տրված է հետազոտության արդյունքների վերլուծությունը:

‹‹Եզրակացություն›› բաժնում հեղինակը ներկայացրել է ատենախոսության հիմնական արդյունքները, ընդգծելով վիրտուալ սոցիալական հարթակների կարևորությունը ժամանակակից մարդու կյանքում՝ առաջին հերթին սոցիալական խնդիրների լուծման հարցում, ինչպես նաև առանձնացնելով դրանք որպես ինքնաներկայացման կարևոր տարածք և հնարավորություն: Ներկայացվել են վիրտուալ տարածքում հայ օգտատերերի նախապատվություններն ու դրանցից

բխող հաղորդակցման եղանակները, կատարվել է հարցվածների հաղորդակցական ռազմավարությունների տիպաբանում համաձայն այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են սեռը, տարիքը, սոցիալական կարգավիճակը, զբաղվածություն և այլն: Հետազոտության ընթացքում ուրվագծվել են վիրտուալ սոցիալական ցանցերում հայ օգտատերերի հաղորդակցման հիմնական նպատակները, ինչպես նաև քննարկվել է հայ օգտատերերի կողմից դրսևորվող վստահության մակարդակը՝ վիրտուալ սոցիալական ցանցերում առկա տեղեկատվության արժանահավատության գնահատման համատեքստում: Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ հայ օգտատերերի ռազմավարության, նրանց նախապատվությունների, վարքի մոդելների, վիրտուալ ինքնության կառուցարկման ձևաչափի, սոցիալական ցանցերում վստահության մակարդակի, ընդունելիի և անընդունելիի սահմանների ուրվագծման հիման վրա ներկայացվել է վիրտուալ տիրույթում հայ հասարակությանը հատուկ սոցիոմշակութային բնութագրությունը:

6. Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ

Չնայած ծավալուն և բավականին հետաքրքիր վերլուծությանն ու արդյունքներին, տվյալ աշխատանքը զերծ չէ թերություններից: Մասնավորապես,

- ‹‹Պաշտպանությանը ներկայացված հիմնադրույթները›› հատվածում հեղինակը չի անդրադառնում այդ դրույթներին, այլ խոսում է ատենախոսության տեսական և գործնական նշանակության մասին:
- Հեղինակը նշում է, որ հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունների բացահայտման միջոցով իրականացված օգտատերերի տիպաբանումը կատարել է այլ երկրներում առցանց հաղորդակցությունների օգտատերերի տիպերի համեմատությամբ (էջ 7-8), սակայն աշխատանքում, կարծես, նման համեմատական վերլուծություն չի հանդիպում: Հետաքրքիր կլիներ իմանալ, թե ո՞ր երկրի/երկրների օգտատերերի հետ է կատարվել համեմատությունը և ինչ եզրակացության է հանգեցրել այն:
- Շարադրանքից այնքան էլ հասկանալի չէ, թե արդյոք հաղորդակցման ցանցային մոդելը ենթադրում է ընդամենը համացանցի ‹‹մասնակցությունը›› հաղորդակցման շղթայում, թե՞ այն ենթադրում է ընդհանրապես կառուցվածքային առանձնահատկություններ, մասնավորապես այնպիսին, ինչպիսիք են հորիզոնական կապերն ու հարաբերությունները կամ դրանց գերակայությունը: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք հաղորդակցության ցանցային մոդելը նույնական է ‹‹առցանց հաղորդակցություն›› հասկացությանը:

- Շարունակելով նախորդ կետի միտքը, հետաքրքիր կլիներ իմանալ՝ արդյո՞ք տրամաբանորեն հակասական չէ հաղորդակցման՝ իր բնույթով հիերարխիկ հանդիսացող ‹‹կասկադային մոդելի›› դիտարկումը ցանցային մոդելների շարքում, քանի որ ցանցը, ամեն դեպքում, ենթադրում է հորիզոնականության գերակշռություն:
- Աշխատանքում օգտագործվել է ‹‹վիրտուալ կապիտալ›› հասկացությունը, որի բովանդակությունը ավելի լայն ներկայացման կարիք ունի:
- Փոքր ինչ անհասկանալի է հաղորդակցման մոդելների բաժանման հիմքը: Մասնավորապես, 3-րդ էջում հեղինակը նշում է, որ ‹‹հաղորդակցության ոչ գծային/երկկողմանի որոշ մոդելներ դիտվում են նաև որպես ցանցային մոդել՝ միջնորդի դերում դիտարկելով հենց համացանցը››, այնինչ աշխատանքի 25-րդ էջում հեղինակը նշում է, որ մոդելները ‹‹կարող ենք բաժանել երեք մեծ խմբի՝ հաղորդակցության գծային, ոչ գծային/երկկողմանի և ցանցայինի››:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները: Անտրիետա Արաիկի Կարապետյանի ‹‹Հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում›› թեմայով ատենախոսությունը ինքնուրույն կատարած ավարտուն հետազոտական աշխատանք է, որում լուծված են գիտական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության և սեղմագրի տեքստը շարադրված է հստակ և տրամաբանված, ինչպես նաև համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Հաշվի առնելով շարադրվածը, գտնում եմ, որ Անրիետա Արաիկի Կարապետյանի ‹‹Հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում›› թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը արժանի է ԻԲ 00.01 - ‹‹Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ›› մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ
Կ.Է.Յարալյան

Տիկին Կ.Է.Յարալյանի ստորագրությունը
իսկությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար՝
Մ.Վ.Հովհաննիսյան

04.11.24